

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ----- 2021թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

**«ԵՐԵՎԱՆԻ Հ. 87 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի հ.17-Ն հրամանի 12-րդ կետի 1-ին ենթակետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել ամերիկահայ բարերարներ Յակոբ և Լուսովիկա Այնթապլեանների անվամբ՝ «Երևանի Յակոբ և Լուսովիկա Այնթապլեանների անվան հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 87 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացիներ Յակոբ և Լուստովիկա Այնթապլեանները ցանկություն են հայտնել իրականացնել «Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգումը (Ավան վարչական Խուռյակովի փողոց, 44): Այդ նպատակի համար՝ որպես նվիրաբերություն «Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հետ կնքվել է **500 000** (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար գումարի ներդրման պայմանագիր:

Միաժամանակ նվիրաբերողները ցանկություն են հայտնել դպրոցն անվանակոչելու իրենց անվամբ:

Նկատի ունենալով, որ ուսումնական հաստատությունները կարող են անվանակոչվել ֆիզիկական անձանց անվամբ, եթե այդ անձիք նշանակալից ներդրում ունեն պետական ուսումնական հաստատության հիմնանորոգման, վերակառուցման գործում, առաջարկը քննարկվել է հ.87 միջնակարգ դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի, մանակավարժական և ծնողական խորհուրդների նիստերում և կայացվել է անվանակոչության համաձայնության մասին որոշում:

Մասնագիտությամբ բժիշկ-սրտաբան Յակոբ Այնթապլեանը՝ բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է, անդամակցում է Նյու Յորքի գիտությունների ակադեմիային: «Հայաստանի օժանդակության Ամերիկայի համագաղութային մարմնի» կողմից, որի փոխատենապետը և բժշկական օգնության հանձնախմբի նախագահն է Յակոբ Այնթապլեանը, **1988** թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից հետո զգալի աջակցություն է տրամադրել երկրաշարժից տուժածներին:

Յակոբ և Լուստովիկա Այնթապլեանները ակտիվորեն մասնակցում և օժանդակում են ամերիկահայ համայնքի հասարակական ու մշակութային կյանքին:

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի «Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Յակոբ և Լուստովիկա Այնթապլեանների անվամբ անվանակոչելու վերաբերյալ ներկայացվել է միջնորդություն դպրոցի տօրինության կողմից:

«Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը դրական է գնահատել Յակոբ և Լուստովիկա Այնթապլեանների անվամբ դպրոցի անվանակոչության առաջարկը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի **2021** թվականի հունվարի 20-ի հ.17-Ն հրամանի 12-րդ կետի 1-ին ենթակետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 87 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ Հ. 87 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի հ.87 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ